



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

Archbishop Khajag Barsamian, Primate

Թի 2284
Մարտ 22, 1996

Արժանաշնորհ
Տ. Մամբրէ Ա. Քհնյ. Գուգուեան
Հովի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախաէագ Ծխական Խորհուրդի
Գէյմպորհ

Սիրելի Տէր Մամբրէ,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 9, 1996 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 4, 1996-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդի հինգ անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Արթըր Աւագեան
Ծան Քէֆէեան
Հելեն Գրիգորեան
Կարի Գալաճեան
Մայքըլ Մարգարեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան դրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Անդամական Ժողովին ներկայացուած բոլոր տեղեկագիրները պէտք է ստորագրուած ըլլան առ նուազն աստենապետին կողմէ. իսկ Հոգեւոր Հովիւին տեղեկագիրը՝ Հոգեւոր Հովիւին կողմէ:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը, եւ կը մաղթենք որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունի

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ
Առաջնորդ